

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 8-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված հոգևոր ճեմարանի 1986—1987 ուսումնական տարվա վերաբացման: Վեհափառ Հայրապետի կողքին, նախագահության սեղանի շուրջ, տեղ էին գրավել Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, Տ. Ներսես արքեպ. Պոլապալյանը և հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը:

Հոգևոր ճեմարանի վերաբացման հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և մայրավանքի պաշտոնեությունը:

Հանդիսությունը սկսվեց Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով: Այնուհետև հնչեց Սովետական Հայաստանի պետական հիմնը: Ապա հոգևոր ճեմարանի սաները կատարեցին ճեմարանի քայլերգը, որից հետո Տ. Եղրաս աբեղա Ներսիսյանը Սուրբ Ավետարանից ընթերցեց «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9): Ընթերցումից հետո ճեմարանի սաները, ղեկավարությամբ ճեմարանի եկեղեցական երաժշտության դասախոս բարեշնորհ Հայկ սրկ. Ֆրունջյանի, կատարեցին «Աշակերտք Քրիստոսի» և «Որք կարդարեցին» շարականները: Հոգևոր ճեմարանի Ե լսարանի ուսանող Գառնիկ Կարապետյանը ընթերցեց Նարեկից՝ շնորհաբաշխ Սուրբ Հոգուն ուղղված աղոթք-աղերսը (Բան ԼԴ):

Բացման խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը:

«Վեհափառ Տեր, գերաշնորհ սրբազան, հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, սիրելի սաներ և ներկաներ,

Աստուծո ողորմությամբ և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ կրկին իր դռներն է բացում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը: Քիչ հետո կհնչի 1986—87 ուսումնական տարվա առաջին զանգը:

Ավանդական դարձած բացման արարողության այս պահը թելադրում է մեզ մի քանի մտածումներ, որոնք ուղեցույց պետք է դառնան մեր առաջիկա աշխատանքների համար:

Հայտնի է բոլորիս, որ հոգևոր ճեմարանի հիմնական նպատակն է՝ պատրաստել հոգևորականներ Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի համար: Առաջին հայացքից շատ պարզ և դյուրին է թվում: Բայց այդ՝ առաջին հայացքից միայն:

Երկհազարամյա պատմություն ունեցող Հայ Եկեղեցին քարուքանդ եղավ առաջին համաշխարհային պատերազմի և Մեծ եղեռնի տարիներին: Երկու հազար տարի կառուցված և մի քանի տարում ավերված Եկեղեցին վերականգնելու համար անհրաժեշտ էին տասնյակ տարիներ:

Ավերումից բացի, Հայ Եկեղեցին ստիպված էր այլևս գոյատևել աշխարհագրական

երկու բաժանումներով՝ Սովետական Հայաստան և Սփյուռք:

Աստուծո ողորմությամբ Հայ Եկեղեցին սկսեց ոտքի կանգնել երջանկահիշատակ Տ. Գևորգ Զ կաթողիկոսի օրերին, իսկ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի անմնացորդ նվիրվածության և անխոնջ աշխատանքի շնորհիվ Հայ Եկեղեցին կրկին վերագտավ իր նախկին շեն ու բարեկեցիկ վիճակը: Ողջ աշխարհով մեկ կառուցվեցին նոր եկեղեցիներ և վերակառուցվեցին ավերվածները, ստեղծվեցին նոր թեմեր և պատրաստվեցին հոգևորականներ՝ ծառայելու Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին ամենուր:

Եվ այս բարելավ պայմաններում է, որ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը շարունակում է իր գործունեությունը՝ հոգևորականների պատրաստումը: Բնական է, որ այսօր այլ են լինելու հոգևոր ճեմարանի առջև դրված պահանջները: Այսօր շեշտը դրվելու է ոչ թե քանակի, այլ որակի վրա: Այսօրվա հոգևորականները պետք է դաստիարակված լինեն հիմնական երեք առաքինություններով.

ա. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.—Հայ ժողովրդի հայրենիքը այսօր Սովետական Հայաստանն է: Ոմանք, հատկապես արտասահմանում, հայրենասիրություն են քարոզում՝ խոսելով հայության մասին ընդհանուր արտահայտություններով: Հայությունը, սակայն, առանց հայրենիքի հիմք չունի: Չի կարելի հայրենասեր լինել առանց հայրենիքը սիրելու: Միայն հայրենիքն է, որ կարող է ուժ տալ հայությանը թե՛ մայր հողի վրա, թե՛ Սփյուռքում: Հիշենք Արշակ Բ թագավորի միջադեպը Պարսից արքունիքում: Այս առումով պետք է որ հոգևոր ճեմարանի ամեն մի շրջանավարտ, որ կոչվել է ծառայել հայ ժողովրդին, ճշմարտացիորեն և գիտակցաբար սիրի իր Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

բ. ԱՆՇԱՀԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ.— Հոգևոր ճեմարանի շրջանավարտը, որ կոչված է ծառայելու Հայ Եկեղեցուն, պետք է դաստիարակված լինի անշահախնդրության ոգով: Բարեկեցիկ տնտեսական պայմաններ ստանալու ակնկալության մտայնությամբ չի կարելի ճշմարտացիորեն ծառայել Հայ Եկեղեցուն: Նման հոգևորականը միայն վարձկան փինվոր կարող է լինել: Իսկ Հայ Եկեղեցին կարիք ունի հարապատ վավակների:

գ. ԿՐՈՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.— Չափազանց կարևոր է, որ Հայ Եկեղեցու հոգևորականը սիրի և յուրացնի իր կրոնը՝ աստվածաբանությունը, ծեսը, աստվածաբանական գիտելիքները և այլն: Հոգևորականը իր կյանքի օրինակով միայն կարող է 20-րդ դարի մարդուն ուսուցանել քրիստոնեական վարդապետության ճշմարտությունները:

Ահա երեք հիմնական խնդիրներ, որոնք դրված են Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության առջև: Այո, նաև ուսանողության առջև, որովհետև, սիրելի ուսանողներ, եթե ձեր մեջ չլինի անձնական նախանձախնդրություն և ձգտում, տեսչության և դասախոսական կազմի աշխատանքները կնըմանվեն այն սերմերին, որոնք ընկան ապառաժի վրա և ոչ մի արդյունք չտվեցին:

Մյուս կողմից դասախոսներն ու դաստիարակները ամեն ջանք պետք է ի գործ դնեն նման ապառաժները բերրի հողի վերածելու համար: Դա անհնարին չէ: Հայ ժողովուրդը երկար դարեր կարողացել է քարից ջուր քամել: Մենք չպետք է մոռանանք մեր նախնիների ավանդը:

Այս տարի հոգևոր ճեմարանի տեսչության կազմում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները: Հովվական աշխատանքի մեկնելու կապակցությամբ հոգևոր ճեմարանի փոխտեսչի պաշտոնից ազատվել է Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը:

Իբրև ընդհանուր դաստիարակ աշխատանքի է հրավիրվել Մայր Աթոռի միաբան Տ. Պարգև աբեղա Մարտիրոսյանը: Այս հանդիսավոր պահին մենք մաղթում ենք սիրելի հայր տուրբին հաջողություն իր աշխատանքի մեջ:

Հոգևոր ճեմարանի ուսմասվար է նշանակվել Տ. Հուսիկ քհն. Լազարյանը, իսկ քարտուղար՝ Արմեն Հովսեփյանը:

Դասախոսական կազմը շարունակում է իր գործունեությունը հիմնականում նույն կազմով:

Վեհափառ Տեր, իսկ այժմ թույլ տվեք հայցել Ձերդ Սրբության օրհնությունը հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության համար, օրհնություն, որը չափազանց անհրաժեշտ է՝ մեր աշխատունակությունը և հոգեկան կենսախնդությունը միշտ բարձր պահելու համար»:

Ապա տեսուչ քահանա հայրը հրավիրեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին Ամենայն Հայոց՝ տալու իր օրհնությունը նոր ուսումնական տարվա շեմին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Մայր Աթոռի կյանքում այս պահը ամենաուրախ պահերից մեկն է անշուշտ: Այս պահը, երբ մեր հոգևոր ճեմարանը իր դռները բաց է անում, և սկսվում է դպրոցական նոր տարեշրջանը՝ 1986—1987-ը: Այս առիթով

ես էլ ուրախությամբ գտնվում եմ ձեր մեջ և բերում եմ Սուրբ Լուսավորչի գահից իմ օրհնությունը՝ հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմին, պաշտոնեության և նաև սիրելի մեր սաներին այն վստահությամբ, որ նաև նոր տարեշրջանը պիտի լինի արդյունավետ աշխատանքի տարի թե՛ դասախոսական կազմի և թե՛ ուսանողության համար:

Շնորհավորում եմ նոր ուսումնական տարին և մաղթում եմ ուժ, եռանդ, անսպառ ներշնչանք, որպեսզի մեր դասախոսները կարողանան այդ ներշնչումները փոխանցել իրենց սաներին, ոչ միայն նրանց գիտելիքները հարստացնելով, այլ նաև այդ գիտելիքների հետ ջամբելով նրանց սերը, և խանդավառությունը ավանդված առարկաների նկատմամբ:

Սիրելի սաներ, ասացի, որ ես ուրախությամբ եկել եմ այստեղ ձեզ հետ միասին ապրելու այս ուրախ պահը: Ենթադրում եմ, որ դուք ևս ուրախ եք: Ուրախ եք, որովհետև աշխատանքի նոր տարեշրջան մըն է սկսվում: Միայն ծույլերը և անպետք մարդիկ են, որ աշխատանքից խուսափում են, կամ աշխատանքով չեն զբաղվում: Պատահում են նաև այդպիսիններ դժբախտաբար: Բայց կարծում եմ, որ դուք այդպիսիներից չեք և, հետևաբար, իրոք որ ուրախ եք, որ պիտի սկսվի ձեզ համար աշխատանքի նոր տարեշրջան:

Ճիշտ է, որ տարեվերջին, երբ աշխատանքը կատարվել է և ավարտին հասել, դուք մի քիչ հոգնած լինեիք աշխատանքից և կարիքը զգայիք մի քիչ հանգստանալու, ինչպես նաև մեր դասախոսների համար ճիշտ է այս: Իրոք որ դպրոցական կյանքը, հատկապես դասախոսների համար, հոգնեցուցիչ աշխատանք է: Դրսից դիտողները երբեմն այդ իրողությունը չեն հասկանում: Այնպես որ բնական է, որ տարեվերջին և՛ դասախոսները, և՛ ուսանողները քիչ հոգնած լինեն և պահանջը զգան աշխատանքը դադարեցնելու՝ մի կարճ ժամանակով: Բայց հետո, երբ այդ հանգստի ժամանակը անցնում է, ես կարծում եմ, որ ամեն մեկդ ձեզանից անհամբեր է լինում սպասելու այս պահին, երբ նոր աշխատանք պիտի վերսկսի:

Աշխատանքի մասին շատ է խոսվում, շատ է խոսվել, բայց միշտ էլ պետք է խոսվի, որպեսզի միշտ թարմանա աշխատանքի որակը: Իրականության մեջ մարդու մարդկությունը ցուցաբերող, արտահայտող ամենաբնորոշ գծերից մեկը աշխատանքն է: Այն մարդը, որ աշխատանք չի սիրում, ոչ միայն ծույլ է, կամ ուրիշ ածականներ էլ կարող ենք շարել, այլ նաև զրկված է մարդկային ամենաբնորոշ այդ հատկանիշից, այդ առաքինությունից: Ինչ որ կատարված է հիշատակությանը արժանի այս աշխարհի վրա, նաև մեր պատմության ընթացքին, Հայ Եկեղեցու պատմության ընթացքին, եղած է աշխատանքով: Երբեմն ծանր աշխատանքով, մանավանդ երբ խոսքը կվերաբերի հայոց: Հողագործությունից սկսյալ մինչև մտավորական բարձր ասպարեզներում հայ աշխատողը, անցյալում շատ ավելի ծանր պայմանների մեջ է գտնվել, քան թե ուրիշ ժողովուրդներ: Ինչպես ասում են, երևի ճիշտ է այն պատկերավոր խոսքը, թե հայը աշխատանքով քարից հաց է ստեղծում: Ահա այդ հացը՝ նյութական և հոգևոր իմաստով, մեր ժողովրդի միշտ անբաժան կյանքի ընկերն է եղած, և հայապգի զավակները միշտ այդ հացով են սնվել, ապրել, ստեղծագործել:

Հիմա հերթը ձերն է, սիրելի սաներ, որ նույն աշխատանքի ոգով շարունակեք ձեր նախնիքների ճանապարհով ընթանալ, և այս դեպքում խոսքը հոգևոր հացի մասին է, հոգևոր սնունդը դուք կարողանաք ձեր աշխատանքով ձեռք բերել այս հարկի տակ և նույնիսկ, ինչպես քիչ առաջ հիշվեց Ավետարանի պատգամը, ձեր ստացածը բաժանել՝ մեկի տեղ երեսուն, վաթսուն և այլն:

Ահա այս մաղթանքով, սիրելի սաներ, շնորհավորում եմ ձեր նոր ուսումնական տարին, մաղթում ձեզի ուժ, կար և անսպառ եռանդ, որպեսզի դուք ձեր աշխատանքները կատարեք բարեխղճորեն, սիրով ու զգոնությամբ, և տարեվերջին բաց ճակատով ներկայանաք ձեր քննություններին:

Մաղթում եմ ձեզ հաջողություններ և հայցում ձեզ Աստուծո օրհնությունը, այժմ և հավիտյանս, ամեն:

Հոգևոր ճեմարանի վերաբացման հանդիսությունն ավարտվեց Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով: